ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

3.05.2019
342-08

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Արտակ Զեյնալյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Զեյնալյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին է դիմել «Թիքեյ ընդ Փարթներս» ՓԲԸ գործընկեր, փաստաբան (Փաստաբանական արտոնագիր N 2072) Միսակ Բաբաջանյանը: Վերջինս 2019 թվականի ապրիլի 15-ին տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղեկություն «Լիդիան Յուքեյ Կորպորեյշընն Լիմիթեդ» (Lydian UK Corporation Limited) և «Լիդիան Կանադա Վենչուրս Կորպորեյշընն» (Lydian Canada Ventures Corporation) ընկերությունների հետ առնչվող գործով միջազգային արբիտրաժային դատարանում ՀՀ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման համար արտաքին իրավախորհրդատուի ընտրության վերաբերյալ: Հարցմանն ի պատասխան Արդարադատության նախարարությունը 2019 թ.-ի ապրիլի 26-ին ուղարկել է պաշտոնական գրություն, որում սակայն փաստաբանի հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը չի տրամադրվել և հարցմանը լիարժեք պատասխան չի տրվել:

Ուստի, համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Արտաքին իրավախորհրդատուի ընտրության համար արդյո՞ք անցկացվել է բաց մրցույթ, եթե այո, ապա որտե՞ղ է հրապարակվել նման մրցույթի հայտարարությունը, եթե ոչ, ապա ի՞նչ հիմնավորումներ են օգտագործվել նման մրցույթի չանցկացման համար և որտե՞ղ կարող ենք ծանոթանալ նման հիմնավորումներին:

2. Արդյո՞ք առկա է Տեխնիկական Առաջադրանք (Terms of Reference)։ Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել դրա պատճենը։
3. Ու՞մ կողմից է տեղի ունեցել արտաքին իրավախորհրդատուի ընտրությունը։ Արդյո՞ք այդ նպատակի համար ստեղծվել է հատուկ հանձնաժողով, եթե այո, ապա ովքե՞ր և ի՞նչ չափանիշների հիման վրա են ընդգրկվել այդ հանձնաժողովում և արդյո՞ք այդ հանձնաժողովի համար ստեղծվել է գործունեության և որոշումների ընդունման վերաբերյալ հատուկ ընթացակարգ, եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել վերոնշյալ ընթացակարգի պատճենը։
4. Արտաքին իրավախորհրդատուի ընտրության համար ՀՀ կառավարությունն ի՞նքն է դիմել օտարերկրյա իրավաբանական ընկերություններին, թե նման ընկերություններն են իրենց առաջարկները ներկայացրել ՀՀ կառավարությանը։ Խնդրում ենք տրամադրել օտարերկրյա այն իրավաբանական ընկերությունների առաջարկները, որոնց միջից էլ կատարվել է համապատասխան ընտրությունը։
5. Արդյո՞ք մասնակցություն ունեցած օտարերկրյա իրավաբանական ընկերություններն ունեցել են լոկալ/ներպետական գործընկերներ (իրավաբանական գրասենյակներ և/կամ անհատ իրավաբաններ), եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել այդ իրավաբանական գրասենյակ(ներ)ի և/կամ անհատ իրավաբան(ներ)ի վերաբերյալ տեղեկություններ։ Ավելին, խնդրում ենք նշել, թե արդյոք օտարերկրյա իրավաբանական ընկերությունների և վերջիններիս լոկալ/ներպետական գործընկերների համար անցկացվել է հնարավոր շահերի բախման առկայության կամ բացակայության գնահատում, թե՝ ոչ։ Եթե այո, խնդրում ենք դրամադրել այդ գնահատման արդյունքները և կամ համապատասխան եզրակացությունները։ Բացի այդ, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ մեր ընկերությունն ունեցել է շահերի բախում արտաքին իրավախորհրդատուի ընտրության գործընթացում մասնակցություն ունեցած օտարերկրյա իրավաբանական անձանցից մեկի հետ (ինչն իրականում չի համապատասխանում իրականությանը)։ Խնդրում ենք հայտնել, թե ու՞մ կողմից է տեղի ունեցել հնարավոր շահերի բախման գնահատումը և ի՞նչ հիմքերի հիման վրա է կայացվել նման որոշումը։ Խնդրում ենք տրամադրել նման որոշմանը վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները։
6. Արդարադատության նախարարության կամ նրա ենթակա կառուցներից ինչպիսի՞ գրագրություն է առաքվել մեր ընկերության կողմից ներկայացված 4 ընկերություններին (Hogan Lovells, Linklaters, Signature, Boies, Shiller and Flexner)։ Խնդրում ենք տրամադրել այդ գրագրության բոլոր պատճենները։
7. Ո՞ր օտարերկրյա իրավաբանական ընկերությունն է ընտրվել որպես ՀՀ արտաքին իրավախորհրդատու, և ի՞նչ չափանիշների հիման վրա է կատարվել

այդ ընտրությունը: Որքա՞ն է կազմում ընտրված (եթե այդպիսին կա) ընկերության գնային առաջարկը: Խնդրում ենք նաև տրամադրել ընտրության մասին որոշում, ինչպես նաև գնահատման արդյունքները, ինչպես ընտրված ընկերության, այնպես էլ բոլոր առաջարկ ներկայացրած ընկերությունների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան